

Կիրակոս Հօշանց գիւղը Սիւնեաց Քչտաղս (Քաշաթաղք) դաւառին մէջ եւ շինեց հոն նոր անապատ հանդերձ եկեղեցւով, որուն նաւակատիքը կատարուեցաւ 1615 Սեպտեմբերին. իրեն ընկերացաւ Թուժա կաթիկոպոս: Տէր Կիրակոս վախճանեցաւ 1620ին:

Ներսէս Վ. Մոկացի ժամանակ մը անցնելէ ետքը Մեծ Անապատին մէջ՝ գնաց Լիմ կղզին եւ հոն հիմնարկեց նոր անապատ: Ներսէս վախճանեցաւ 1627ին:

Կարապետ կաթիկոպոս էջմիածնեցի գնաց Սեւան կղզին եւ վերածեց զայն անապատի:

Արիստակէս Բարկուշատցի գնաց Տանձափարախ, ուր բացաւ նոր անապատ:

Դաւիթ կաթիկոպոս Շամքոռցի գնաց Շամքոռի ձորը եւ շինեց հոն անապատ, որ կը կոչուէր Չարեքաղետի անապատ: Էջմիածնի ձեռագրի⁷ մը մէջ հետեւեալը կը կարդամ. «Ես Արիստակէս վարդապետս, տէր Յակոբս, տէր Բարսեղս վաճառեցաք զայս գիրքս Չարեքայ անապատին. Դաւիթ պարոնտէրն, տէր Սաչատուրն, տէր Անտոնին եւ այլ միաբանիցն. ի թվին ՌՁԶին (1637). մի ոք հակառակութիւն արասցէ...: Ես Դաւիթ կաթիկոպոս եւ իմ միաբանքս ըստացաք զայս գիրք Մեծ Անապատէն Արիստակէս վարդապետէն»: Սարգիս կրօնաւոր 1641ին կը նորոգէ Աւետարան մը «ի սուրբ անապատս Չա-

⁷ Էջմ. Թ. 2608, թղ. 464ա (Մ. Երզնկացւոյ Մեկնութիւն ժամադրոց):